ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2022 թվականի դեկտեմբերի 21-ի նիստի (հարցման կարգով)
N 3 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Տնտեսագիտության տեսության ամբիոնի ավագ դասախոս, տնտեսագիտության թեկնածու **Տաթևիկ Արտաշեսի Մկրտչյանի «Վարքագծային տնտեսագիտություն»** դասախոսության նյութերի հրատարակությունը երաշխավորելու մասին հարցը:

Հրատարակության ներկայացված դասախոսության նյութերը բաղկացած են 5 գլուխներից, 18 ենթահարցերից, որոնք շարադրված են 166 էջ ծավալով: Հեղինակի կողմից կատարված է տեսական և մեթոդաբանական մոտեցումների խոր և համապարփակ ուսումնասիրություն, աշխատանքում քննարկվող հարցերն ունեն տրամաբանական հաջորդականություն, ներկայացված են խորությամբ ու բազմակողմանի: Աշխատանքն արտացոլում է «Տնտեսագիտություն» մասնագիտության բակալավրիատի առկա և հեռակա ուսուցման համակարգերի 4-րդ կուրսի «Վարքագծային տնտեսագիտություն» դասընթացի ծրագրային խնդիրները:

Դասախոսության նյութերի վերաբերյալ ստացվել է 3 դրական կարծիք.

1) Իրինա Բորիսի Պետրոսյան՝ Հայ-ռուսական համալսարանի տնտեսագիտության տեսության և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրների ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ:

2) Հրաչյա Մուշեղի Օհանյան՝ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի դասախոս, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ:

3) Ռուզաննա Ռոբերտի Արմենակյան, Նարինե Հայկի Խալաթյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսագիտության տեսության ամբիոնի դոցենտներ, տնտեսագիտության թեկնածուներ:

Բոլոր կարծիքներում նշվում է, որ հրատարակության ներկայացված աշխատանքն իր բովանդակությամբ ու կառուցվածքով համապատասխանում է դասախոսության նյութերին ներկայացվող պահաջներին և կատարված է գիտամեթոդական բարձր մակարդակով:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով գրախոսների դրական կարծիքները, տնտեսագիտության տեսության ամբիոնի, տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի և համալսարանի գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի նիստերի որոշումները՝ տնտեսագիտության տեսության ամբիոնի ավագ դասախոս, տնտեսագիտության թեկնածու **Տաթևիկ Արտաշեսի Մկրտչյանի «Վարքագծային տնտեսագիտություն» դասախոսության նյութերը** երաշխավորել հրատարակության, 200 օրինակ տպաքանակով, «Տնտեսագետ» հրատարակչությունում (նախատեսված է հրատարակչական պլանով): Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն (կողմ՝ 56, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2022 թ. դեկտեմբերի 21
Երևան